ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

Թիվ 287-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏԻ 25.03.2013Թ. ԹԻՎ 94-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի N 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 47-րդ կետի 1-ին ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի մեթոդական խորհրդի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի մեթոդական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի,
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի՝ 25.03.2013թ.՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մեթոդական խորհրդի կազմը հաստատելու մասին» թիվ 94-Ա հրամանը:
4. Հրամանը ծանոթացնել մեթոդական խորհրդի անդամներին:

ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

«22» 04 2025թ.
ք. Երևան

Հավելված 1
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի
«22» 04 2025թ. թիվ 287-Ա հրամանի

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Էմիլ Մարգարյան՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր (Մեթոդական խորհրդի նախագահ).
2. Միսակ Մարկոսյան՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր.
3. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման պետ.
4. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման պետ.
5. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման պետի տեղակալ.
6. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման պետի տեղակալ.
7. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետ .
8. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժնի պետ.
9. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժնի պետ (Մեթոդական խորհրդի քարտուղար).
10. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման վերապատրաստման կենտրոնի պետ.
11. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման վերապատրաստման կենտրոնի պետ:

Հավելված 2
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի
«22» 04 2025թ. թիվ 287-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի (այսուհետև՝ կրթահամալիր) մեթոդական խորհուրդը (այսուհետև՝ մեթոդական խորհուրդ) կրթահամալիրի ռեկտորին կից գործող խորհրդակցական մարմին է, որի նպատակը կրթահամալիրի մեթոդական աշխատանքի կազմակերպումն ու համակարգումն է:

2. Մեթոդական խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կանոնադրությամբ, սույն կարգով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

3. Մեթոդական խորհրդի խնդիրներն են՝

1) Կրթահամալիրի մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների մշակումը, 2) Կրթահամալիրում ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը,

2) Կրթահամալիրում նոր մանկավարժական տեխնոլոգիաների յուրացմանն ուղղված փորձառնական-որոնողական, նորարարական և հետազոտական գործունեության կազմակերպումը,

3) Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական մասնագիտական որակների կատարելագործման ուղղությամբ խորհրդատվության կազմակերպումը,

4) Կրթահամալիրում մանկավարժական առաջավոր փորձի ընդհանրացումն ու տարածումը,

5) Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմին մեթոդական օժանդակության ցուցաբերումը:

2. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Մեթոդական խորհրդի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1) Դասավանդման մեթոդիկայի հարցերով զեկույցների պատրաստումն ու քննարկումը,

2) Կրթահամալիրում մանկավարժական գործունեության վերլուծությունը,

3) Կրթահամալիրի հրատարակությունների վերաբերյալ կարծիք տալը՝ այդ թվում գիտական խորհրդի կողմից երաշխավորվող,

4) Մեթոդական խորհրդի իրավասությանը վերապահված հրատարակությունները տպագրության երաշխավորելու մասին որոշում կայացնելը,

5) Ուսումնական գործընթացում օգտագործվող դիդակտիկ նյութերի ուսումնասիրությունը,

6) Ուսումնական գործընթացի պլանավորման, առարկայական ծրագրերի և նկարագրերի, մոդուլային ծրագրերի կազմման հարցերով զեկույցների քննարկումը,

7) Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման նպատակով մանկավարժական փորձերի կազմակերպումն ու իրականացումը,

8) Փորձառու դասախոսների և սկսնակ կադրերի համագործակցության կազմակերպումը:

3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Մեթոդական խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ: Նիստերում քննարկված հարցերը, դրանց բովանդակությունն ու կայացված որոշումներն ու հանձնարարականները արձանագրվում են մեթոդական խորհրդի քարտուղարի կողմից:

4. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Մեթոդական խորհուրդը լիազորված է՝

1) Որոշել կրթահամալիրի մեթոդական աշխատանքի ռազմավարությունը,
2) Գնահատել կրթահամալիրի ուսումնամեթոդական աշխատանքների որակը,
3) Առաջարկություններ ներկայացնել կրթահամալիրում ուսումնականգործընթացի կատարելագործման վերաբերյալ,
4) Գնահատել առարկայական ծրագրերը և նկարագրերը, մոդուլային ծրագրերը,
5) Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին ներկայացնել խրախուսման մեթոդական աշխատանքի զարգացմանն ունեցած ներդրումի համար:

5. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7. Իր գործունեության ընթացքում մեթոդական խորհուրդը Կրթահամալիրի գիտական խորհրդի քննարկման է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

8. Մեթոդական խորհրդի գործունեության նկատմամբ հսկողությունը իրականացնում է կրթահամալիրի ռեկտորը: